լեհեր նստած. երրորդ տեսարանը հովիւներն են իրենց ոչխարներով եւ այծերով, նաեւ շունը: Հովիւների գլուխը փաթթոցով: Հովիւների հետ խօսող անձը նոյնպէս գլխի փաթթոցով, արեւելեան զգեստով եւ կանացի դէմքով: Սրածայր կամարից վերեւ՝ դրրսից, վեց հրեշտակներ են փառաբանող:

Նկարի մեծ. 20x21, 8 սմ. մի մասով 12½. անկանոն:

«3բ. Մկրտութիւն (պատկ. 2): Ամպերով եւ կիսաշրջանով մատնանշուած աստեղազարդ երկնքից՝ Հօր Աչն է երեւում, իբրեւ նշան Նորա ներկայութեան. աղաւնակերպ Հոգին իջնում է Յիսուսի գլխին, որ մինչեւ ուսերը ընկղմած է Յորդանանի մէջ, գլուխը խաչազարդ լուսոյ պսակով. աջ ափին կանգնած է Յովհաննէս, աջ ձեռքը խաչանիշ դէպի Յիսուս մեկնած, ձախը աղօթողի ձեւով, գօտեկապ պարեգօտը մինչեւ ծնկները, յետեւից ժողովրդի բազմութիւն: Երկու հրեշտակ բռնած են Յիսուսի զգեստները: Յիսուսի ոտքերի տակ որեւէ բան կայ, թէ ոչ, չի նկատւում:

4ա. Պայծառակերպութիւնն է (պատկ. 2): Յիսուս լուսաւոր ձուաձեւ, մակերեւոյթի վերայ կարմիր աստղերով շրջանակի մէջ, լուսոյ պսակը խաչաձեւ, կարմիր յատակի վերայ, վերնազգեստը սպիտակ, մինչեւ ոտքերը հասնող, ձգուած նոյնչափ երկար պարեգօտի վերայով. ձախով աւետարան բռնած, աջով խաչակնքում է: Աջ կողմից Եղիան է բարեխօսի դիրքով, ձեռքերը մեկնած, Մովսէս միւս կողմից, մի ձեռքը մեկնած, միւսով դիրք բռնած: Ներքեւում՝ Յիսուսի ոտքերի տակ, ձախից «Պետրոս», ձեռքը գլուխը տարած, մէջինը պառկած՝ «Յովհաննէս», երրորդը «Սբ. Յակոբ»: Յիսուսի ոտքերի տակ գրուած է «պայծառակերպութիւն»: Պատկերի ամբողջութեան տակը նկարչի անունը նախ յունարէն՝ Աբաս ցոգրաֆ ապա նոյնը վրացերէն:

Պատկ. 2. Մկրտութիւն եւ Պայծառակերպութիւն

5ա. Մուտքը Յերուսաղէմ (պատկ. 3): Տաճարը հայկական դմբեթով եւ բոլորակ թմբուկով, ատամնաձեւ պարսպից ներս. ա-